Արձանագրություն 3

«Սյունիք» ՋՕԸ-ի կարիքների համար «ՍՑ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով գարնանային նախապատրաստական աշխատանքների ձեռքբերման գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04 փետրվարի 2020թ. ժամը 15:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Արսեն Առաքելյան

Հանձնաժողովի անդամներ՝
Համբարձում Սարգսյան
Սլավիկ Զաքարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ֆ. Մանգյան

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

1.1 «Սյունիք» ՋՕԸ-ի կողմից թղթային եղանակով կազմակերպված «ՍՑ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Մ-Գրուպ» ՍՊԸ-ն: Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա էր անհամապատասխանություն՝ մասնավորապես ներկայացված չէր մասնակցի կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը:

1.2 «Սյունիք» ՋՕԸ -ի կողմից կազմակերպված «ՍՑ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Մ-Գրուպ» ՍՊԸ-ին տրամադրվել էր 1 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը շտկելու համար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ մասը և 41-րդ կետը :

1.3 «Մ-Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետներում ներկայացրել է իր կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

2.1 «Սյունիք» ՋՕԸ -ի կողմից կազմակերպված «ՍՑ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց բավարար համարել «Մ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թերությունների ակտերի բացվածքը:

2.2 Հաշվի առնելով, որ գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն 2020թ. փետրվարի 7-ին ժամը 15:00-ին մասնակիցներն հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների՝ որը տեղի կունենա ՀՀ, ք. Երևան, Մարմենի 1 2/1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Արսեն Առաքելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Համբարձում Սարգսյան

_____ Սլավիկ Զաքարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ֆլորա Մանգյան